

կարևոր բան մը չգտնուիր :

Հակարձային բեւեռին վրայ տեսնուած աստղերը բոլորովին տարբեր են արձային բեւեռին վրայ տեսնուածներէն , և աւելի բազմաթիւ աստեղաց խումբեր կը տեսնուին , որոնք երկու միգամածներ են քիչ մը բաժնուած իրարմէ , և մէջտեղնին ալ քիչ մը մթննկէկ : Իսոնց մէջ երկու աստղ կայ ոչ այնչափ մեծ և ոչ այնչափ լուսաւոր , որոնք խիստ քիչ կը շարժին . և հոն է հակարձային բեւեռը : Ս'եր կողմնացուցին ասեղը խոտորիլ սկսելով , միշտ դէպ 'ի արձային բեւեռ կը դառնար , և զօրութիւնն ալ տկար էր , քան ինչ որ արձային բեւեռին մօտ եղած աստեռն ունէր . ուստի և հարկ էր օգնել մագնիսով ասեղին զօրութիւնը աւելցնելու համար , վասն զի տեղէն չէր շարժէր , ինչպէս որ կը շարժի մեր կողմերը : Երբ ծոցին մէջտեղն հասանք , իսպ մը տեսանք հինգ պայծառ աստղներով , դէպ 'ի արեւմուտք և իրարմէ հաւասար հեռաւորութեամբ :

Եւս օրերս դէպ 'ի արեւմուտք նաւարկեցինք , այնչափ որ գիշերահաւասարի ծրին մօտեցանք , և ինչուան երկայնութեան 1207 աստիճանը առաջ գացինք դէպ 'ի հարաւային բեւեռ : Հոս հասնելէն ետքը սկսանք ետ դառնալ դէպ 'ի մեր ճամբայ ելած տեղերը :

Հոս կը վերջացրնենք մեր ճանապարհորդին տուած տեղեկութիւնները , որ դեռ շատ երկայն են : Հարկ է ըսենք որ մէջի տուած ամէն տեղեկութիւններուն պէտք չէ առանց ընտրութեան հաւատալ . որովհետեւ ժամանակին նախապաշարումներն և ամէն տեսակ գիտութեանց և արուեստից աղօտ և թերահատար ծանօթութիւնները որ ունէին մարդիկ ասկէ երեք դար առաջ , իրենց շատ բան նորատեսիլ մը երեցուցած է : Իրեն գրուածքին գլխաւոր յար-

գր աս կողմնակէ է , որ Սակեյլանի ճամբորդութեանց վրայ մանրամասն տեղեկութիւն կու տայ , որ իրմէ զատ ուրիշ մը գրած չէ . և աս տեղեկութիւններս ոչ ուրիշէն առնելով կամ լսելով շարագրած է , այլ ինքնին ականատես գրտնուելով : Իր ձեռագիրը Ս'իլանու Բ'մբրոսեան գրատան մէջ կը պահուի , և աս վերջերս գտնուելով Բտալերէն և Գաղղիարէն քանի մը տպագրութիւններ ալ ունեցաւ :

Չիւնուրակակն կիև մը :

Եւ վերջերս Բարիզ անկելանոցի մը մէջ 84 տարուան կին մը մեռաւ թեղիա Ֆինիէօր անունով , որ 1800էն սկսեալ 200 Ֆրանգ տարեկան թոշակ ունէր տէրութէն , ըրած զինուորական ծառայութեանցը փոխարէն . և աս թուշակին վրայ ուրիշ մըն ալ աւելցուցեր էր ետքի տարիներս հիմակուան կայսրը : Բայց ինչ արդեանց համար արդեօք վասն զի Ֆինիէօր 1793էն ինչուան 1812 մասնակից եղեր էր իբրև զինուոր հասարակապետութեան և կայսրութեան պատերազմներուն , Սան-ժէն աւուամբ : Իր քաջութեան առջի փորձը ցուցրցեր էր Ենգղիացոց դէմ , Գուլանի պաշարման ժամանակ , ուր որ ծանօթացեր էր նաև Ս'եծին Վաբովէնի հետ , որ դեռ ան միջոցին պարզ սպայ էր : Ս'երջապէս Ֆինիէօր որ քսան տարի անընդհատ քաջերու մէջ կենալով միշտ նշանաւոր եղած էր . քաջասրտութեւր հետ բարի կնկան մ'ալ անուն ժառանգած էր . և ինչպէս կ'ըսեն լրագիրք , շատ ախորժելի բան էր իր բերնէն ըրած պատերազմներուն պատմութիւնը ըսել :

